«ՏՈՒՆ (ՖԻՔՍՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ)» ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Գույքի ապահովագրությունը հիանալի միջոց է պաշտպանելու Ձեր անշարժ գույքը և կանխելու խոշոր ֆինանսական կորուստները հրդեհից, բնական աղետներից և այլ վտանգներից:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ՌԳՍ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1
Հեռ.՝ (+374 12) 88 88 88
Կայք՝ www.rgs.am

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ

- Տան ներքին հարդարանքի և/կամ ինժեներական սարքավորումների ոչնչացումը կամ վնասումը հրդեհի, պայթյունի, կայծակնահարման, տրանսպորտային միջոցների վրաերթի և/կամ կենդանու հետ բախման, թռչող սարքերի, դրանց մասերի, բեռի վայր ընկնելու, սեփականության նկատմամբ հանցագործության (կոտրանքով գողություն, ավազակություն, այլ անձանց կողմից գույքի դիտավորությամբ ոչնչացում/վնասում), հարևան տարածքներից վթարի արդյունքում ջրի և այլ հեղուկների ներթափանցման հետևանքով,
- Երրորդ անձանց (հարևանների) գույքին, և/կամ կյանքին և/կամ առողջությանը պատճառված վնասները՝ հրդեհի, պայթյունի, ջրի արտահոսքի և այլ ռիսկերի ի հայտ գալու դեպքում:

ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ

Տարեկան 17,900 ՀՀ դրամ:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ

- Ներքին հարդարանք և ինժեներական սարքավորումներ՝ 1,000,000 ՀՀ դրամ,
- Քաղաքացիական պատասխանատվություն՝ 600,000 ՀՀ դրամ:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ապահովագրության պայմաններին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ «ՌԳՍ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ 02.05.2018թ. թիվ 04 արձանագրությամբ հաստատված «Շինությունների, բնակարանների, տնային և այլ գույքի, գույքի սեփականատերերի (տնօրինողների) քաղաքացիական պատասխանատվության կամավոր ապահովագրության պայմաններ»-ում՝ այցելելով ապահովագրական ընկերության պաշտոնական կայքը:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության վկայագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով:

ՈՐՔԱՆ Է ՀՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ

Հիատուցվող գումար չի նախատեսվում:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ

- Տան հարդարանքի և/կամ ինժեներական սարքավորումների վնասումը կամ ոչնչացում,
- Քաղաքացիական պատասխանատվություն (Երրորդ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին պատճառված վնաս):

ԻՆՉ ՔԱՅԼԵՐ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՁԵՌՆԱՐԿԵԼ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

- Պատահարի տեղի ունենալուց կամ հայտնի դառնալու պահից հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում զանգահարել «ՌԳՍ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի (+374 12) 88 88 88 շուրջօրյա հեռախոսահամարին և հայտնել պատահարի մասին,
- Պատահարի մասին անհապաղ հայտնել համապատասխան իրավասու մարմիններին (գողության, կոտրանքի, թալանի կամ երրորդ անձանց կողմից գույքի կանխամտածված (միտումնավոր) ոչնչացման կամ վնաս հասցնելու դեպքում՝ Ոստիկանություն, հրդեհի դեպքում՝ ԱԻՆ և այլն),
- Ձեռնարկել բոլոր հնարավոր ողջամիտ և տվյալ պայմաններում հասանելի միջոցներն ապահովագրության օբյեկտի հետագա վնասումը կանխելու և վնասի չափը նվազեցնելու համար,
- Կատարել ապահովագրական ընկերության ցուցումները:

ՈՐՈՆՔ ԵՆ ՀԱՏՈՒՅՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Պատահարի մասին ապահովագրական ընկերությանը տեղեկացնելուց հետո վերջինիս գրասենյակում լրացնել հայտային դիմումը կամ այն լրացնել առցանց եղանակով՝ www.rgs.am կայքում առկա «Առցանց ծառայություններ» բաժնի միջոցով,
- Ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը,
- Սպասել ապահովագրական ընկերության հետագա ցուցումներին,
- Հատուցման կամ մերժման որոշումը կայացվում է հայտի կարգավորման համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում,
- Հատուցման գումարը վճարվում է հատուցման որոշում կայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

ՈՐ ԴԵՊՔԵՐԸ ՀԱՏՈՒՅՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ

Ցանկացած պարագայում հատուցման ենթակա չեն այն վնասները, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում.

- Երկրաշարժ,
- Միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ուղղակի կամ անուղղակի ազդեցություն,
- Ռազմական գործողություններ, զորաշարժեր կամ այլ ռազմական միջոցառումներ,
- Աղտոտվածության կամ կոռոզիայի ազդեցություն, բնական մաշվածություն, ջերմային վերամշակման ընթացքում գույքին պատճառված վնաս,
- Պայթուցիկ նյութերի պատճառված վնասումը, որոնք օգտագործվել են ապահովագրության օբյեկտի հասցեում,
- Ապահովագրված անձի /նրա ընտանիքի անդամների/մերձավոր ազգականների կողմից կամ մասնակցությամբ դիտավորությամբ պատճառված վնաս և այլն,
- Ապահովագրական ընկերությունն ազատվում է երրորդ անձանց կյանքին և/կամ գույքին պատճառված վնասի ապահովագրական հատուցում իրականացնելու իր պարտավորությունից, եթե ապահովագրված անձի անհրաժեշտ ինքնապաշտպանության արդյունքում վնաս է պատճառել այլ անձի, որն անմիջական ոտնձգություն է իրականացրել ապահովագրված անձի՝ օրենքով պաշտպանված իրավունքների և շահերի նկատմամբ,
- «ՌԳՍ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ 02.05.2018թ. թիվ 04 արձանագրությամբ հաստատված «Շինությունների, բնակարանների, տնային և այլ գույքի, գույքի սեփականատերերի (տնօրինողների) քաղաքացիական պատասխանատվության կամավոր ապահովագրության պայմաններ»-ով նախատեսված այլ դեպքերում:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

- **Ապահովագրությունն իրականացվում է առանց գույքի նախնական վննման,**
- **Առաջին ռիսկի հատուցման պայմանով (հատուցումը հաշվարկվում է վնասի չափով՝ ապահովագրական գումարի սահմաններում՝ առանց վնասի չափի նկատմամբ ապահովագրական գույքի և գույքի շուկայական արժեքի հարաբերության համամասնություն կիրառելու),**
- **Հատուցումն իրականացվում է՝ հաշվի առնելով մաշվածությունը (ապահովագրության օբյեկտի վնասման դեպքում իրական վնասի չափը հավասար է դրա վերանորոգման (վերականգնման) համար կատարված ծախսերի արժեքին՝ հաշվի առնելով մաշվածությունն ու արժեզրկումը, որպեսզի ապահովագրության օբյեկտի արժեքը վերականգնվի այն չափով, որը համապատասխանում է անմիջապես մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալը դրա ունեցած արժեքին),**
- **Ապահովագրական ընկերության հատուցման որոշման հետ համաձայն չլինելու դեպքում Դուք իրավունք ունեք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, Կենտրոնական բանկ, Դատարան/Արբիտրաժային դատարան:**

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից: